

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«26» մարտի 2013 թ.

գ. Իսահակյան

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Վարչական հսկողության 2013 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 190-Ա հրամանի և ի կատարումն ՀՀ Շիրակի մարզպետի 2013 թվականի փետրվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Իսահակյանի համայնքում վարչական հսկողություն իրականացնելու մասին» թիվ 15 կարգադրության, աշխատանքային խումբը, մասնակցությամբ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության պետ Կառլեն Աբրահամյանի (խմբի ղեկավար), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արտավազ Գևորգյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Հուրիկ Մարտիրոսյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հարությունյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) գլխավոր մասնագետ Լյուվա Հակոբյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ Հայկ Սարգսյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի առաջատար մասնագետ Զորիկ Խաչատրյանի (խմբի անդամ), ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի Իսահակյանի գյուղական համայնքի ղեկավար Արտավազ Արսենյանի, Իսահակյանի համայնքում կատարել է վարչական հսկողություն, որն ընդգրկել է 2010 թվականի մարտի 1-ից մինչև 2013 թվականի մարտի 1-ն ընկած ժամանակաշրջանը:

Վարչական հսկողությունն սկսվել է 2013 թվականի մարտի 1-ին և ավարտվել՝ 2013 թվականի մարտի 19-ին:

Վարչական հսկողության արդյունքում պարզվել է հետևյալը՝

Իսահակյանի համայնքի ղեկավարը ավագնու 2010 թվականի օգոստոսի 6-ի նիստի քննարմանն է ներկայացրել համայնքում իրականացված նախորդ վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2010 թվականի մարտի 17-ի տեղեկանքը, ընդունված 2010 թվականի օգոստոսի 6-ի թիվ 17 որոշմամբ հաստատել է միջոցառումների ժամանակացույց և միջոցներ է ձեռնարկել վարչական հսկողությամբ արձանագրված թերություններն ու բացթողումները վերացնելու ուղղությամբ: